



ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ  
Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

Տարի 11, Թիւ 112 Յունուար 2003

# ՄԷԿԸ ԴՈՒՌԸ ԿԸ ԶԱՐՆԷ

«Ահա ես դուրը կայնեք եւ ու կը զարնեմ:»  
Յայտ. 3:20

Տէրը երբ դուրը կը զարնէ, ապացոյց է թէ բաւական մօտ է ու պատրաստակամ  
ներս մտնելու, փափաք ու ծրագիր ունի անհատին համար, կ'ուզէ երկնային  
օրհնութիւններով ողորդել քեզ:

Նոյնպէս, վերոյիշեալ համարը ցոյց կու տայ քու պարտականութիւնդ լսելու դրան  
ձայնը ու անապարանօք բանալու զայն ընդունելով Յիսուսը ներս:

Ստիպողական բան մը չկայ. կեցած կը զարնէ ու կը սպասէ բացուելուն:

Մարդուն ներաշխարհը տան մը նման է, շատ սենեակներով: Տէրը ամէն մէկ  
սենեակին դուրը կը զարնէ, որպէսզի որեւէ սենեակ գոց չմնայ իր առջեւ:

## 1. Փրկիչը կը զարնէ —

Դուրը կը զարնէ քաջ գիտնալով որ փրկութեան պէտք ունիս:

Մահուան ու յափտեանական կորուստի բունէն արթնցնելու համար կեցած է դրանը  
առջին: Որպէս հոգիին փրկագինը վճատող կը զարնէ դուրը որպէսզի առնէ այն որ  
Իր արիւնով ծախու առած է:

Եթէ մեղաւոր մէկը Իմ ձայնս լսէ ու բանայ, անոր քով պիտի մտնեմ:

## 2. Բժիշկը կը զարնէ —

Նպատակը բժշկութիւն է:

Գիտէ թէ մարդուն հոգին հիւանդ է, բժշկական հպումի պէտք ունի:

Գլովիւր հիւանդ է, պիտըրը կը նուաղի, ձեռքերն ու ոտքերը կը թողան, հետեալաբար  
բժիշկի մը այցելութեան, խնամքին պէտքը կայ:

Մարդուն ներսը մեղքի թոյնով ամբողջութեամբ ապականած է:

Ահա բժիշկը դրանը քով է: Երբ մեղքով հիւանդ ես ու բանաս, քովդ գալով կը  
բժշկէ քեզ:

## 3. Ուսուցիչը կը զարնէ —

Այս ուսուցիչին ամէն անհատ պէտք ունի: Ան Աստուծմէ եկած մեծ ուսուցիչն է,  
ինք իր աշակերտներուն աչքերը կ'օծէ, որպէսզի տեսնեն ու հասկնան երկնատր  
բաները:

Միտքդ որ կոյրցած է աստանային կողմէ, կրնայ գերեցկօրէն լուսատրել իրմով, որովհետեւ ինք Աստուծոյ իմաստութիւնն է:

Հոգեադրապէս անուս մարդը երբ դուրը կը բանայ, խորունկ ճշմարտութիւններ կը սորվի:

#### 4. Թագաւորը կը զարնէ –

Իր դրական իշխանութիւնը տարածելու նպատակով: Սասանայի գերեվարող իշխանութենէն մեզ իր ազատ իշխանութեան տակ կ'առաջնորդէ:

Ինքնակեդրոն կեանքը կործանուած կեանք մըն է:

Տէրը կ'ուզէ կատարել կեանքդ, քու օգտիդ եւ իր փառքին համար:

Մինչեւ թագաւորին թագադրուիլը, հոգին գերութեան, ետակեդրոն լուծի մը տակ է:

Տէրը կ'ուզէ քու կեանքիդ կատարութիւնը իր ուետուն վրայ, որպէսզի հոգիիդ գործերը վստա ընթացքի մէջ չըլլան:

Ուե՛տ մէկը երբ բանայ, անոր քով մտնելով իր իշխանութիւնը պիտի տարածէ:

#### 5. Վաճառականը կը զարնէ –

Անշուշտ կ'ուզէ հարստացնել քեզ:

Ան գիտէ ու կը տեսնէ աշխատութիւնը անոնց որոնք կ'ըսեն «հարուստ եմ ու բանի մը պէտք չունիմ»: Անքննելի ճոխութիւնները իր մէջ են: Այս վաճառականին սէրն ու գործը առաջնորդած են քու դուրդ: Աղքատ հոգիդ կ'ուզէ իր լեցումութիւնովը լեցնել:

Տէրը կ'ըսէ. - Ինձմէ կրակի մէջ փորձուած ոսկի ատէք որպէսզի հարստանաք:

Առանց դրամի կ'ստնես, երբ վաճառականը ներս կ'ընդունիս:

#### 6. Փեսան կը զարնէ –

Դուն ուրախութեան պէտք ունիս. ուրախացնողը փեսան է:

Իր փափաքն է հաղորդակցիլ քեզի հետ:

Պետրոս երեք անգամ այս զարկը լսեց. «դուն զիս կը սիրե՞ս».

Իր սէրը կը մղէ զինք դուր զարնելու եւ մեր սէրն ալ մղելու է բանալու:

Մտերմիկ, քաղցր հաղորդակցութիւն, ինձի եւ քեզի հետ: Սքանչելի ու փառաւոր երկնային ծրագիր, երկնաւորներուն համար, հասցնելու երկինք, երկնայիննին:

«Եթէ մէկը իմ ձայն, լսէ ու բանայ դուրը, ներս պիտի գամ:»

---

## ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

**Կիրակի** - Առաւօտեան 11-ին Պաշտամունք

Մանուկներու Կիրակնօրեայ

**Երեքշաբթի** - Երեկոյեան 7-ին Սերտողութիւն

**Հինգշաբթի** - 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն

8:30-ին Երգչախումբի Փորձ

**Ուրբաթ** - Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով

7:30-ին Պատանեաց

**Ծաբաթ** - Ամէն Ամսուայ Վերջին Ծաբաթը Երեկոյեան

7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Բաասկան սպասել էտք Ծճմոտըր հասա, եա սասաօտեան պաշտամոնքին մեք Կիրակօրեայ դպրոցի աշակերտները մեզի հետ էին, Սաղմոսներով ու երգերով իրենց օրհնութեան բաժինը բերին բոլորիս: Աստուած օրհնէ երեխաները:
- Նոյն, Ծճմոտի օրը Դեկտ. 22-ին իրիկուան ժամը 7-ին երաժշտական յայտագիրն էր, Կլէմտէլի Մկրտականներու եկեղեցաշէնքին մէջ: Անգլերէն-Հայերէն երգեր, ասմոնքներ, մեներգներ ու նուազ կազմեցին գեղեցիկ փունջ մը: Իսկ փոքրերու խումբի մասնակցութիւնը անմոսնայի էր. երգեցին Անգլերէն, Հայերէն ու Սպաներէն լեզուներով: Ծրագիրին իրենց մասնակցութիւնը բերին ոչ միայն մեր եկեղեցիէն այլ նաեւ Մկրտական եկեղեցիէն եւ ուրիշ անհասներ տարբեր եկեղեցիներէ: Տեղոյն հովիւը՝ Վեր. Սուրեն Յարութեան տուա հակիրճ պատգամ մը, յայտագիրը առաջնորդեց Արմինէ Յովհաննէսեանը, իսկ բակման խօսքն ու աղօթքը՝ մեր հովիւը: Տիրոջը ձեռքերուն մէջ գործածուելով Միհրանը եւ Լուսինէն գեղեցիկ արդիւնքի հասան: Տէրը օրհնէ բոլոր մասնակցող հոգիները ու ամէնը հոգեւորապէս շինուին:
- Դեկտեմբեր 23-ին ունեցանք մեր տարեկան ծառայակիցներով ընթրիքը, ուսել-կշտանալէ ետք ունեցանք պաշտամոնք. Յակոբ եղբայր Կըլլեան գեղեցիկ պատգամ մը փոխանցեց, եղան աղօթքներ ու հաղորդակցութիւն:
- Թէեւ երկնտութեան մէջ էինք Աւետոյի կապակցութեամբ, սակայն շնորհիւ Արմէն եղբայր Կարապետեանի խումբ մը ուղքի ելաւ եւ իրականացուց: Ժամը 1-էն ետ հասներով հովիւին տունը քիչ մը հանգչեցան, քիչ մը կերան ու աղօթքէ ետք շտապելին իրենց տուները, ցուրտէն պաշտպանուելու եւ տաքով անկողինները գործածելու: Ծորճիկ եղբայրն ու Անահիտ քոյրը ունեցան նոր փորձառութիւն. Միհրան եղբայրն ալ միացած էր: Երեք պատանուհիներ կային՝ Աննան, Լիան եւ ամենափոքրը՝ Փոլինը:
- Յայտարարեցինք ու Տիրոջը շնորհքով իրականացաւ, Նոր Տարուայ առաջին օրը պաշտամոնք ունեցանք: Տասակուսանքի մէջ էինք թէ հաւատացեալներ պիտի գա՞ն: Փառք Աստուծոյ մատուղը գրեթէ լեցուն էր, մինչեւ իսկ Շուշանեանները Մայիլաուէն եկած էին: Երեք եղբայրներ, Ծորճիկ եղբայրն ու հովիւը աղօթեցին, մի քանի երգերէ ետք առիթ տրուեցաւ արտայայտութիւններու եղան պարզ ու սրտանց արտայայտութիւններ, վկայութիւն եւ փառաբանութիւն: Երգչախումբի երգերէն ետք հովիւը պատգամեց, սպա ունեցանք առաջին հաղորդութեան սեղանը:
- Տէրը կամի Աւետարանչականի քարտողարը մեզի պիտի ըլլայ 12-ի առաւօտուն: Վեր. Ժիրայր Սողոմեան կու գայ Նիւ Ծըրզիէն եւ օրուան պատգամը պիտի տայ: Աղօթող ըլլանք: Աւետարանչականը Հայ Աւետարանական Միութեան պատկանող կազմակերպութիւնն է, որ Աստուծոյ շնորհքով մեր Հայրենիքէն սկսեալ աշխարհի չորս կողմը ծառայութիւններ կը մատուցէ ոչ միայն մեր ազգի զաւակներուն, ինչպէս նաեւ այլ ազգիներու: Տէրը զօրացնէ ու երկնային տեսիլքով առաջնորդէ:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Կեանքը Քրիստոսի հետ անվերջանալի յոյս է. առանց Քրիստոսի անյոյս վերջաւորութիւն մը:*
- ◆ *Լաւագոյնին յուսայ, Տիրոջը վստահէ:*
- ◆ *Մէկ ճամբայ կայ հաւատացեալին համար - խոնարհութիւն:*
- ◆ *Խոնարհութիւնը մեզ սատանային հասանելիութեան հետո կը պահէ:*
- ◆ *Խոնարհութիւնը, քաղցր արմատն է որմէ երկնային առաքինութիւններ կը ծիին:*

# ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Որքան հաճախ մեր կյանքում  
Ոստիկն ենք հանդիպում,  
Փնտրում ենք էլք ու լուծում  
Չվստահելով Աստծուն:

Ինքնուրույն ենք միշտ փորձում  
Հախթահարել թշնամուն,  
Պատերազմում ու կովում  
Չսպասելով Աստծուն:

Միայնակ ու անզեն ենք  
Թշնամու դեմ դուրս գալիս,  
Ու հաճախ էլ զարմանում  
Ինչո՞ւ ենք միշտ պարտվում:

Պէտք է վստահիլ Աստծուն  
Ինչպես Դավիթը իր կյանքում,  
Տերոջմով էր մարտնչում  
Պատերազմում ու հախթում:

Առանց Տերոջը մի կանգնիր  
Թշնամու դեմ պատերազմի,  
Աղոթիր ու վստահիր  
Դու Տերոջը միշտ սպասիր:

Սամվել Սարկատզ Հակոբյան  
Երեսան

## ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթե Տէրը կ'առաջնորդէ այս թերթիկին կամ այն եկեղեցապատկան  
ծառայութիւններու նիւթական աշակցութիւն բերել, սրտանց կը գնահատենք:

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)